ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ս. Ս. ՁՈՒԲԱՆՅԱՆ

## ԷՋԵՐ Վ. ՄԻՐԱՔՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Հայ անվանի գրող Վահան Միրաքյանը լայն հասարակությանը հայտնի դարձավ «Լալվարի որսը» պոեմով, որը իր հասարակական, պատմական նշանակությամբ և գեղարվեստական բարձր արժանիքներով դարձավ հայ նոր գրականության մնայուն գոհարներից մեկը։

Միրաքյանի պոեմը ինքնատիպ այն հիմնաքարերից մեկն է, ինչպես Հ. Թումանյանի «Անուշը», Ղ. Աղայանի «Տորք Անգեղը», որոնցով սկսվեց մեր պոեզիայի դեմոկրատական ուղղությունը։ Նրա վրա իր խոր կնիքն է թողել ժողովրդական բանահյուսությունը։

Վ. Միրաքյանը հայ ընթերցողին հայտնի է ու սիրելի ոչ միայն որպես ստեղծագործող, այլև որպես բազմավաստակ մանկավարժ։

40 տարի շարունակ Վ. Միրաքյանը իր ավանդն է մուծել մատաղ սերնդի դաստիարակության գործում և հատկապես մամուլում առաջ քաշել մանկավարժական, մեթոդական, հայ գյուղը լուսավորելու կենսական հարցեր։

* *
*

Մեր ուսումնասիրությունների ընթացքում, դժբախտաբար, հանդիպեցինք բազմաթիվ թյուր ու սխալ կարծիքների, որոնք հրապարակվել են ինչպես հեղինակի կենդանության, այնպես էլ ետմահու շրջանում։

Վ. Միրաքյանի ծննդյան թվականի, գրական ասպարեզ իջնելու, «Կոնո» ծածկանվան ոչ ճիշտ լուսաբանման, սոցիալական ծագման, թոշակի անցնելու և նման մանր թվացող այլ հարցերի ուղղումն ու ճշգրտումը ոչ թե լոկ ժամանակագրական նշանակություն ունեն, այլև որոշակի առումով մեր գրականության և մանկավարժության պատմության մեջ Միրաքյանի տեղը ճիշտ որոշելու հիմնական նախապայմաններ են։

Այդ առավել ևս կարևոր է այն պատճառով, որ 1966 թ. նոյեմբերի 6-ին լրանում է անվանի գրողի ծննդյան 100-ամյակը[1]։ Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ վերոհիշյալ հարցերին և հավաստի տեղեկություններով ճշտել տարբեր ժամանակներում Միրաքյանի վերաբերյալ սխալ տեսակետներն ու կարծիքները, միևնույն ժամանակ կանգ առնել Միրաքյանի մանկավարժական հայացքների վրա։

Վ. Միրաքյանի համագյուղացի, դրականագետ, քննադատ Գրիգոր Բալասանյանը 1903 թ. «Բանասերում» տպագրած իր «Վահան Միրաքյանը և նրա

---

[1] Օրացույց. 1966. Երևան։

«Լալվարի որսը» գրախոսության մեջ նշում է, որ «Միրաքյանը ծնվել է Վրաստանի Բորչալուի գավառի Շուլավեր գյուղում, 1868 թվականին»[2]։

Տասներեք տարի անց, 1916 թ. Վ. Յ. Բրյուսովը «Հայ պոեզիան» աշխատության մեջ նշել է, որ Վահան Միրաքյանը ծնվել է 1875 թ.[3], իսկ 1929 թ. առաջին անգամ «Զարյա Վոստոկա»-ում տպագրված Միրաքյանի կենսագրության մեջ արդեն ծննդյան տարեթիվը հասցված է մինչև 1866 թ.[4]։

Հետագայում հրատարակված բազմաթիվ թերթերում, ամսագրերում և գրքերում[5], հիմք է ընդունված միայն «Զարյա Վոստոկա»-ում նշված ծննդյան տարեթիվը։

Ի դեպ, Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի կողմից 1953 թ. հրատարակված «Հայ գրականության բիբլիոգրաֆիա»-ում գրված է մի նոր տարեթիվ՝ 1886[6]։

Արխիվային նյութերի ուսումնասիրություններից, Միրաքյանի բազմաթիվ համագյուղացիների, բարեկամների հետ զրույց ունենալուց հետո մեզ հաջողվեց ձեռք բերել 1881 թ. օգոստոսի 25-ի Դաշտային մատյան բնագիր փաստաթուղթը[7], որը 1908 թ. հունվարի 4-ին որպես հողային պահանջի փաստաթուղթ գրանցված է 9008 համարի տակ, և տրվել է Անդրիաս (ինքը՝ Կոնո) Աղաբեկի Միրաքյանին՝ վերջինիցս գրասենյակային ծախսեր գանձելու համար։ Փաստաթուղթը հաստատված է Թբիլիսիի դատական պալատի քաղաքացիական դեպարտամենտի կողմից։

Նույն դեպարտամենտը հաստատել է նաև հողի պահանջի մի այլ փաստաթուղթ՝ № 9009 գրանցումով, որտեղ նույնպես նշված է Անդրեյ (Կոնո) Աղաբեկի Միրաքյան անունը[8]։ Այդ փաստաթղթում նշված է, որ Շուլավերի նորմալ դպրոցի ուսուցիչ Կոնոն (ինքը՝ Անդրիաս Աղաբեկի Միրաքյանը) Թիֆլիսի նահանգի Շուլավերի նոտար Ալեքսանդր Գրիգորի Մանուչարովին է ներկայացրել վերոհիշյալ փաստաթուղթը։

Մեր ձեռքի տակ են գտնվում Վահան և Անդրեյ Աղաբեկի Միրաքյանների ծննդյան վկայականների բնագրերը՝ տրված 1881 թ. № 2434 և 2436 գրանցումներով։

Վահան Միրաքյանը ծնվել է 1866 թ. նոյեմբերի 6-ին, իսկ Անդրեյ Միրաքյանը՝ 1868 թ. դեկտեմբերի 2-ին։ Հարց է ծագում, եղբայրներից ո՞րն է «Լալվարի որսի» հեղինակը՝ Վահա՞նը, թե՞ Կոնոն-Անդրիասը։ Այս հարցն էլ փորձենք պարզաբանել ու հիմնավորել։

Միրաքյան եղբայրներից Կոնոն ուսումը շարունակել է Թիֆլիսում[9], ապա ավարտել Գորիի ուսուցչական ուսումնարանը, իսկ իրենից երկու տարով փոքր

---

2 «Բանասեր», 1903, № 5, էջ 293։

3 «Հայ պոեզիան», 1916, էջ 82։

4 «Զարյա Վոստոկա», 18 հուլիսի 1929, № 136 (2104)։

5 «Անահիտ», 1930, № 3—4, էջ 68։ «Բաղմավեպ», 1952, էջ 180։ «Սովետական Հայաստան», 1952, № 3, էջ 48։

6 «Հայ գրականության բիբլիոգրաֆիա», 1953, էջ 170։

7 Դաշտային մատյանի բնագիրը գտնվում է հոդվածի հեղինակի մոտ։

8 Այդ փաստաթղթի բնագիրը նույնպես գտնվում է տողերիս հեղինակի մոտ։

9 «Խորհրդային գրականություն», 1939, № 3—4, էջ 20։ «Բաղմավեպ», 1952, էջ 180։ «Բանասեր», 1903, էջ 293։

եղբայրը՝ Ալեքսանդրը (Սանդրոն) սովորել ու ավարտել է Թիֆլիսի գյուղատնտեսական ուսումնարանը ու մինչև կյանքի վերջը՝ 1937 թ. աշխատել որպես գյուղատնտես։ Մյուս եղբայրներն ու քույրերը սովորել են միայն ծխական դպրոցում[10]։

86-ամյա Մովսես Մկրտչի Հարությունյանը գրում է. «Միրաքյանի ընտանիքին ճանաչում եմ որպես բարեկամ և համագյուղացի։ Նրանց ընտանիքից միայն Կոնո Միրաքյանն է զբաղվել մանկավարժությամբ՝ 1894 թ. մինչև 1924 թվականը։ 1894—1895 թթ. եղել եմ նրա աշակերտը։

Երբ ես աշխատում էի գրագիր, 1896 թ. անձամբ արտագրել եմ Կոնո վարժապետի գրած «Լալվարի որսը», որը նա սկսել էր դեռ 1893—1894 թթ.։ Մեկ անգամ արտագրելիս ինձ մոտեցավ Հ. Թումանյանը և հարցրեց. Ի՞նչ ես գրում։ Ես ասացի՝ «Լալվարի որսն» եմ արտագրում։ Շարունակիր, շարունակիր,—ասաց նա։ Կոնո վարժապետին ինչպես ես, այնպես էլ իմ կինը, որ նրա կնոջ հորաքրոջ աղջիկն է, ճանաչել ենք որպես Անդրեյ։ Նրա փոքր եղբայր Ալեքսանդր-Սանդրոն ավարտել է Թիֆլիսի գյուղատնտեսական ուսումնարանը հայտնի ռևոլյուցիոներ Ֆիլիպ Մախարաձեի հետ ու աշխատանքի անցել հայրենի գյուղում»[11]։

Շուլավերցի նախկին անտառապահ, այժմ թոշակառու 90-ամյա Ռուբեն Մելիքի Մարությանը պատմում է. «Որպես համագյուղացի, լավ ճանաչել եմ Միրաքյանի ընտանիքին, հատկապես «Լալվարի որսի» հեղինակ Կոնո վարժապետին, որի հետ 1886 թ. ունեցել եմ անձնական մտերմություն։ 1893 թե 1894 թ. Կոնոն մոտեցավ ինձ և խնդրեց միասին Լալվար գնալ այն պատճառով, որ ես անընդհատ շրջում էի անտառներն ու սարերը։ Գիտեի ամեն մի տեղի անունը։ Միասին մեկնեցինք Լալվար։ Այդ ժամանակ Կոնոն ձեռնամուխ էր եղել պոեմի շարադրմանը, որը մի քանի անգամ հաճույքով ընթերցել եմ»[12]։

Բազմաթիվ փաստեր ու հիշողություններ կարող ենք մեջ բերել, բայց հարկ ենք համարում կանգ առնել Միրաքյանի 1902—1903 թթ. աշակերտ ու 1916—1924 թթ. համատեղ պաշտոնավարող, բազմավաստակ մանկավարժ Հայկ Գրիգորի Հակոբյանի վկայության վրա։ Նա գրում է.

«Շուլավերի բանաստեղծը իմ քենու ամուսինն է։ Նրան միշտ Կոնո անունն էի տալիս, չնայած գիտեի, որ նրա պաշտոնական անունն էր Անդրեյ, իսկ գրական ասպարեզում կրում էր Վահան անունը»[13]։

Միրաքյանի կնոջ քույրը՝ թոշակառու մանկավարժ Սիրանույշ Թորոսյան-Հակոբյանը նույնպես հաստատում է, որ ինքը Միրաքյանին ճանաչել է հինգ տարեկանից։ «1899 թ., գրում է նա, երբ հայրս մահացավ, նա ինձ տարավ իր մոտ։ Ես նրան ճանաչել եմ որպես Կոնո, Անդրեյ, Վահան անուններով»[14]։ Վերը ասվածից կարելի է ստույգ հանգել այն եզրակացության, որ հասարակության կողմից ճանաչված Վահան Միրաքյանը ինքը՝ Կոնո-Անդրեյ Միրաքյանն է։

---

10 Տե՛ս Ալեքսանդր Միրաքյանի որդու՝ Միքայելի, Մ. Հարությունյանի, Գ. Նալբանդյանի նամակները հասցեագրված տողերիս հեղինակին։

11 Տե՛ս Մ. Մ. Հարությունյանի 1966 թ. ապրիլի 25-ի վավերացված հիշողությունները։

12 Տե՛ս Ռ. Մ. Մարությանի 1966 թ. ապրիլի 25-ի վավերացված հիշողությունները։

13 Տե՛ս Հ. Գ. Հակոբյանի 1966 թ. ապրիլի 27-ի Թիֆլիսում վավերացված հիշողությունը։

14 Տե՛ս Ս. Թորոսյան-Հակոբյանի 1966 թ. ապրիլի 26-ի վավերացված հիշողությունը։

Մինչև «Լալվարի որսը» պոեմի հրատարակվելը նա գրական աշխարհում ճանաչվել է՝ 1887 թ. մինչև 1895 թ. որպես Կոնո[15], 1896 թ. մինչև 1901 թ. Միր-Կոնո[16], որից հետո՝ Վահան Միրաքյան։

Միրաքյանը 1939 թ. «Խորհրդային գրականություն» ամսագրում հրապարակել է «Հուշեր Հ. Թումանյանի մասին» ծավալուն հոդվածը, որտեղ նա ընդգծել է, որ Հ. Թումանյանը 1898 թ. Շուլավերում գտնվելու ժամանակ ուսուցիչ Արշակ Սարգսի Զորանյանի ներկայությամբ ընթերցելով «Լալվարի որսի» նախերգանքը, բացականչել է. «Եթե կաթսայի խուփը այսքան գեղեցիկ ա, բա մեջի կերակուրը ինչքան համեղ կլինի...»։ Այնուհետև դրել հետևյալ երկտողը՝

«Սիրեցի, Կոնո, քո անուշ երգը,
Թող աստված օրհնի Գուգարքի բերքը»[17]։

Այսպիսով, Հ. Թումանյանը Միրաքյանին ճանաչել է ոչ թե Վահան, այլ Կոնո անվամբ։ Այդ պոեմի հրապարակումից հետո՝ 1901 թ. Միրաքյանը ճանաչվեց որպես Վահան Միրաքյան։

Հարց է առաջանում, ինչո՞ւ Միրաքյանը իր հանրահռչակ պոեմը հրատարակելիս ստորագրեց ոչ թե Անդրեյ, կամ Կոնո Միրաքյան, այլ Վահան Միրաքյան։

Ինչպես Միրաքյանի կենդանության օրոք, այնպես էլ ներկայումս Կոնո անունը տարածված է եղել Շուլավերում։ Միայն 1890—1901 թթ. Շուլավերում ապրել են 18-ից ավելի Կոնոներ[18]։ Հետաքրքրականը այն է, որ շուլավերցիները Կոնո անունը օգտագործել են նաև որպես ածական անուն։ Ինչպես օրինակ՝ «Ծիծակ Կոնո», «Պիլտի Կոնո», «Ուլանց Կոնո», «Ասունց Կոնո»։ Միրաքյանը մյուս կոնոներից տարբերվել է վարժապետ բառի հավելումով՝ «Կոնո վարժապետ»։

Բացառությամբ Միրաքյանի և Տեր-Պողոսյան Հակոբի-Կոնոյի (Աբունց Կոնո)[19] շուլավերցի մյուս կոնոները տարբերվել են իրենց ուսումնառությամբ։

Շուլավերցի 90-ամյա Ռուբեն Մարությանի և 80-ամյա Մարիամ Սահակյանի հետ ունեցած զրույցից պարզվեց, որ 1899 թ., Միրաքյանի ամուսնությունից հետո, նրա կինը՝ Վարյան հաճախակի Կոնո անվան փոխարեն օգտագործել է «Իմ Վահանը՝ վահան է ինձ համար» արտահայտությունը։

Միրաքյանը նոր անվամբ նպատակ ուներ անմահացնել իր ավագ եղբոր՝ Վահանի հիշատակը[20]։ Հետագայում, 1927 թ. պաշտոնապես կոչվել է Վահան անունով[21]։

---

15 «Նոր-դար», 1887, № 89, էջ 2։ «Աղբյուր», 1887, № 9, էջ 329—330։ «Նոր-դար», 1890, № 53, էջ 2—3։ «Տարազ». 1892, № 24, էջ 340։ «Աղբյուր», 1892, էջ 198 և այլն։

16 «Աղբյուր», 1896, № 5—6, էջ 244, 288, 368, 451։ «Տարազ», 1896, № 27, էջ 422, № 28, էջ 435, № 32, էջ 503։ «Աղբյուր», 1897, № 7, էջ 245։ «Տարազ», № 23 և 33։ «Առանց յարերի» (ժողովածու), 1897, և այլն։

17 «Լալվարի որսս»-ի առաջին նմուշը Հ. Թումանյանի մակագրությամբ գտնվում է ՀՍՍՀ ԳԱ գրականության և արվեստի թանգարանում, Միրաքյանի ֆոնդում։

18 Հիմք՝ Շուլավերի գյուղսովետի 2514—66 թ. № 1346 պաշտոնական գրությունը։

19 Տեր-Պողոսյան Կոնոն ժամանակին աչքի ընկնող մանկավարժներից է եղել, որն աշխատել է Էրզրումում և մահացել 1924 թ. Շուլավերում։

20 Վահանը մահացել է մոտավորապես 1878—1879 թվականին։

21 Տե՛ս Հայկական ՍՍՀ սոցիալական ապահովության մինիստրության անհատական թոշակառուների գործ № 54—353։

Երկու տարի անց, «Զարյա Վոստոկա» թերթում տպագրվեց Միրաքյանի մասին առաջին կենսագրական հոդվածը, որտեղ նշված է ծննդյան թիվը՝ 1866։

Միրաքյանի կյանքը և ստեղծագործությունները առաջին անգամ ուսումնասիրող Լևոն Բատիկյանը ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագրում» և «Սովետական մանկավարժ» ամսագրում հանգել է սխալ եզրակացության։ Նա պնդում է, թե «Կոնո»-ն Միրաքյանի ծածկանունն է, որը Շուլավերի բարբառում իբրև թե նշանակում է վարդի փունջ[22]։

Հարկ է նշել, որ Միրաքյանին ժամանակակիցները ճանաչել են (մինչև 1901 թ.) Կոնո անունով, իսկ ինքը՝ Միրաքյանը Կոնո անունը երբեք որպես կեղծ կամ ծածկանուն չի օգտագործել[23]։

Բացի այդ բոլոր շուլավերցիները Կոնո բառը ծաղկի, վարդի իմաստով չեն օգտագործել և ընդհանրապես Կոնա ծաղիկ գոյություն չունի։ Կոնան վրացական բառ է, ինչպես ադրբեջանական դաստա բառը, որը բանջարեղենի առևտրի մեջ օգտագործվում է որպես չափ։ Շուլավերցիները փոխ առնելով այդ բառը, միայն օգտագործում են առուծախի ժամանակ։ Օրինակ՝ «մեկ կոնա սոխ», «մեկ կոնա ռեհան», կամ «մեկ դաստա թարխուն»։

Միրաքյանի սոցիալական ծագման վերաբերյալ նույնպես թույլ են տրվել սխալ կարծիքներ ու մեկնաբանություններ։ Ոմանք պնդում են, թե իբր նա ծնվել է հողագործի, գյուղացու, անասնապահի ընտանիքում[24]։ Ավելին, ըստ Լևոն Բատիկյանի, «նրա ստեղծագործությունները չեն հրատարակվել վերջինիս տնտեսական վատ պայմանների պատճառով»[25]։

Մեր կարծիքով սխալ է Միրաքյանի գործերի չհրապարակվելը բացատրել տնտեսական վատ պայմաններով։

Մեր ձեռքի տակ է 1895 թ. դեկտեմբերի 30-ի արխիվային № 5489 բնագիր փաստաթուղթը՝ Աղաբեկ Միրաքյանին պատկանած 578,6 հեկտար հողամասի պլանը[26], որը մեկ անգամ ևս հաստատում է Միրաքյանի նյութական ապահովվածությունը։ Հարկ է նշել, որ Միրաքյանը իր ամբողջ կյանքում զբաղվել է մանկավարժությամբ և հետո անցել կենսաթոշակի։ Հետևապես վերը նշված պատճառաբանությունը անհիմն է։

Անճշտություններ կան նաև այն հարցում, թե երբ է Միրաքյանը հանդես եկել գրական ասպարեզում։ «Լալվարի որսը» հրապարակ իջնելուն պես գրականագետ քննադատները մամուլում նշել են Միրաքյանի գրական ասպարեզ իջնելու մասին տարբեր տարեթվեր՝ 1882, 1883, 1887[27]։ Կարծիքներ կան նաև այն մասին, որ նրա առաջին ուսուցիչ, հասարակական գործիչ Գրիգոր Տեր-

---

22 Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 3, էջ 565։ «Սովետական մանկավարժ», № 1, էջ 77։

23 Տե՛ս «Խորհրդային գրականություն», 1939, № 3—4, էջ 20, Շուլավերի նոտարի կողմից 1908 թ. օգոստոսի 25-ի և սեպտեմբերի 20-ի վավերացված №№ 9008 և 9009 փաստաթղթերը։

24 «Բանասեր», 1903, էջ 293։ «Անահիտ», 1930, էջ 68։ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1963, № 5, էջ 56։

25 Լ. Բատիկյանի «Վահան Միրաքյան» ավտոռեֆերատը, ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, 1964, էջ 5։

26 Բնագիրը գտնվում է տողերիս հեղինակի մոտ։

27 «Բանասեր», 1903, էջ 293։ «Զարյա Վոստոկա», 18 հունիսի 1929։ «Անահիտ», 1930, էջ 68։ «Բազմավեպ», 1952, էջ 181։ «Սովետական Հայաստան», 1952, № 3, էջ 48։

Մելիքսեդեկյանի ազդեցությամբ Միրաքյանը դեռ աշակերտական նստարանից փորձել է իր գրական ունակությունները[28]։ Մեր կարծիքով նա ճիշտ չէ։ Նախ, Միրաքյանի առաջին ուսուցիչը եղել է ոչ թե Գ. Տեր-Մելիքսեդեկյանը, այլ համագյուղացի Ասատուր Նալբանդյանը, որը հաստատվում է նրա որդի, կենսաթոշակառու մանկավարժ Գրիգոր Նալբանդյանի վկայությամբ[29]։

Միրաքյանը 1939 թ. «Խորհրդային գրականություն» ամսագրում ուղղակի գրել է. «1885—1886 թթ. ես սովորում էի Անդրկովկասի երկաթգծի միջնակարգ դպրոցում։ Մեկ անգամ հայոց լեզվի ուսուցչին շարադրություն ներկայացնելիս ես բացի պարտադիր աշխատանքից տետրակի մեջ դրի նաև իմ նոր գրած «Սայլորդի երգը» ոտանավորը։ Մի օր ուսուցիչը տետրերը աշակերտներին վերադարձնելիս ամեն մեկի շարադրության մասին դիտողություններ հայտնելուց հետո ժպտալով հանեց իմ տետրակի այն թերթիկը, որը ես ծածուկ դրել էի շարադրության մեջ և բարձրաձայն կարդաց։

Ընթերցանությունը վերջացնելուց հետո նա դարձավ դասարանին և ասաց- «Տեսնո՞ւմ եք Միրաքյանին, ինչ լավ բան է գրել։ Լավ է, որ ձեր դասարանում բանաստեղծ ունեք»[30]։

Այսպիսով, Միրաքյանը գրական ասպարեզ է իջել 17 տարեկան հասակում։ Առաջին անգամ նա մամուլում հանդես է եկել 1887 թ.[31]։

Ճիշտ չեն լուսաբանվել նաև Միրաքյանի ուսումնարանն ավարտելու և կենսաթոշակի անցնելու տարեթվերը։ Դեռ 1903 թ. գրականագետ-քննադատ, Միրաքյանի համագյուղացի Գ. Բալասանյանը գրել է. «Միրաքյանը մի-մի տարի ուսանում է Թիֆլիսի քաղաքական և տեխնիկական ուսումնարաններում, ապա 1886 թ. կիսատ ուսումով անցնում է Գորու Անդրկովկասյան ուսուցչական վարժարանը և երեք տարի անց 1889 թ. ավարտում ուսումը»[32]։

1929 թ. «Զարյա Վոստոկա» թերթը[33], ապա 1930 թ. «Անահիտ» ամսագիրը նշել են մի նոր տարեթիվ՝ 1888[34], իսկ Լ. Բատիկյանը 1963 թ. «Սովետական մանկավարժ»-ում նշել է, որ 1887 թ. Միրաքյանը ավարտել է Գորիի ուսուցչական սեմինարիան, ապա Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը[35]։

Նույն Բատիկյանը 1964 թ. «Վահան Միրաքյան» վերնագրով ավտոռեֆերատում մի նոր տվյալ է ավելացրել։ Նա գրում է. «Միրաքյանը սկզբնական կրթությունը ստացել է Շուլավերում... հետագայում նա սովորել է Թիֆլիսի արհեստավորաց և երկաթուղային ուսումնարաններում, ապա 1889 թ. վերջացնում է Գորիի ուսուցչական ճեմարանը[36]։

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Գր. Բալասանյանի նշած տարեթիվը միակ ճշմարիտ սկզբնաղբյուրն է։ Մեր ձեռքի տակ է գտնվում Գորիի ուսուցչական ճեմարանն ավարտելու մասին Միրաքյանի ստացած վկայականի բնագիրը, որը տրված է 1889 թ. հուլիսի 9-ին, 178/386[37]։

---

28 Տե՛ս Լ. Բ ա տ ի կ յ ա ն ի «Վահան Միրաքյան» ավտոռեֆերատը, էջ 4։

29 Տե՛ս Գրիգոր Ասատուրի Նալբանդյանի՝ տողերիս հեղինակին հասցեագրված նամակը։

30 «Խորհրդային գրականություն», 1939, էջ 20։

31 «Նոր-դար», 1887, № 89, էջ 2։ «Աղբյուր», 1887, № 1—12, էջ 329—330։

32 «Բանասեր», 1903, էջ 293։

33 «Զարյա Վոստոկա», 18 հունիս, 1929։

34 «Անահիտ», 1930, № 3—4, էջ 68։

35 «Սովետական մանկավարժ», 1963, № 1, էջ 76։

36 Տե՛ս Լ. Բատիկյանի «Վահան Միրաքյան» ավտոռեֆերատը, էջ 4։

37 Վկայականի բնագիրը գտնվում է տողերիս հեղինակի մոտ։

Հարկ է ընդգծել, որ Միրաքյանը 1889 թ. մինչև 1927 թ. զբաղվել է մանկավարժությամբ և կենսաթոշակի է անցել 1927 թ. ապրիլի 4-ին[38]։ Սակայն 1930 թ. Փարիզում հրատարակված «Անահիտ» ամսագրում նշված է 1929 թ.[39], իսկ Լ. Բատիկյանի՝ վերևում հիշատակված ավտոռեֆերատում՝ 1932 թ.[40]։ Բացի այդ Լ. Բատիկյանը նույն տեղում նշել է, որ Միրաքյանի առաջին «Երեք վարդ» բանաստեղծությունը հրատարակվել է 1887 թ. «Միր-Կոնո» ծածկանվամբ։

Հարկ ենք համարում պարզաբանել, որ նախ, ինչպես վերևում ասացինք, Միրաքյանը առաջին անգամ հանդես է եկել 1887 թ.[41] «Նոր-դարում», ապա՝ «Աղբյուրում», որտեղ և տպագրվել է «Երեք վարդ» (նմանություն) բանաստեղծությունը ոչ թե «Միր-Կոնո» ծածկանվամբ, այլ Կոնո[42] անունով։

Այժմ կանգ առնենք Վ. Միրաքյանի մանկավարժական գործունեության մի քանի հարցերի վրա։ Միրաքյանը ուսումը շարունակելու նպատակով մեկնում է Թիֆլիս և ընդունվում արհեստավորաց դպրոցը, այնուհետև՝ երկաթգծի տեխնիկական ուսումնարանը։ Հետագայում ուսումը շարունակում է Վրաստանի Ռորի քաղաքի ուսուցչական ճեմարանում։ 1889 թ. ավարտելով ճեմարանը, նա աշխատանքի է անցնում Ջալալօղլիում, որտեղ պարտավոր էր աշխատել վեց տարի՝ ըստ նշանակման։

Երկու տարի անց, Միրաքյանը աշխատանքի է անցնում Նուխի քաղաքում, այնուհետև 1893—1894 թ. աշխատում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։

Սակայն մի քանի ամիս անց, հրաժարվելով Վաղարշապատի ոստիկանությանը հայտնել կղերականության դեմ ըմբոստացած ուսանողների անունները, ստիպված ընդմիշտ թողնում է ճեմարանը[43]։

Անդրեյ Միրաքյանը 1894—1918 թթ. աշխատում է Հայրենի գյուղում, ապա երկու տարի դասավանդում է Թիֆլիսի երկրորդական գիմնազիայում[44] և նորից վերադառնում Շուլավեր։

1924 թ. մինչև 1927 թ. ապրիլի 4-ը՝ կենսաթոշակի անցնելը նա պաշտոնավարում է Երևանի Ձերժինսկու անվան բարձր տիպի դպրոցում, որպես հայ գրականության և լեզվի ուսուցիչ։

Միրաքյանը հայ գյուղը լուսավորելու գաղափարով ոգևորված, առաջին անգամ, 1887 թ. հուլիսի 6-ին, «Նոր-դարում» հանդես է գալիս Կոնո անունով, «Ուփլիս-Ցիխե» ընդարձակ հոդվածով, որտեղ գրում է.

«Զարմանալի չէ, որ Ուփլիս-ցիխեցիները տգիտության քողով ծածկված լինելով, ոչ իրենց մայրենի լեզուն գիտեն և ոչ էլ մտածում են գյուղում մի մասնավոր դպրոց բանալու, բացի մի քանի անձից։ Այդ վերջինները, որ զգում են դպրոց բանալու կարևորությունը, իրենց մեջ պարտական են գորեցի Ս. Գ.-ին[45]՝ մի պարտաճանաչ երիտասարդի, որն երբեմնակի այդ գյուղը հաճախելով, չի զլանում պարզ բացատրություններով ժողովրդին հասկացնել

38 Հայկական ՍՍՀ սոցիալական ապահովության մինիստրության արխիվ, գործ 54—353։

39 «Անահիտ», 1930, № 3—4, էջ 69։

40 Լ. Բատիկյանի «Վահան Միրաքյան» ավտոռեֆերատը, էջ 4։

41 «Նոր-դար», 1887, № 69, էջ 2։

42 «Աղբյուր», 1887, № 1—12, էջ 329—330։

43 Տե՛ս «Բանասեր», 1903, էջ 293։ «Անահիտ», 1930, № 3—4, էջ 69։ «Սովետական մանկավարժ», 1966, № 2, էջ 85 և Միրաքյանի կնոջ ձեռագիր հուշերը։

44 Տե՛ս Ս. Աբրահամյանի նամակը տողերիս հեղինակին։

45 Ուսումնասիրության ժամանակ մեզ չհաջողվեց պարզել, թե ով է «Ս. Գ.»-ն։

ուսումնարան բանալու անհրաժեշտությունը։ Հույս կա, որ հիշյալ պարոնը հասկացնելով ամենին էլ հավասար կերպով ուսման կարևորությունը, մի ծառայություն արած կլինի անօգնական մի բուռ հայ հասարակությանը»։

Միրաքյանը անցնելով մանկավարժական աշխատանքի, քրտնաջան մասնակցում է մատաղ սերնդի դաստիարակության գործին։ Նա մոտ կանգնած լինելով մանկավարժական բնագավառում աշխատող մտավորականներին ու լավ ուսումնասիրելով մանուկների հոգեկան անհատական ունակություններն ու ձգտումները, 1890—1896 թթ. բազմաթիվ հոդվածներով հանդես է գալիս մամուլում, առաջ քաշում մանկավարժական կարևոր հարցեր, որոնք վերջնականապես լուծվեցին միայն Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո։

Ինչպես նշեցինք վերը, Միրաքյանը ընդմիշտ հեռանալով Գևորգյան ճեմարանից, աշխատանքի է անցնում հայրենի գյուղի ծխական դպրոցում, ապա 1897 թ. ռուսական պետական քառամյա դպրոցում, որը մինչև օրս էլ գոյություն ունի և տեղացիների կողմից ճանաչվում է «Կոնո վարժապետի դրպրոց» անունով։

1897 թ., ռուսական պետական դպրոցի հիմնադրման օրից, Միրաքյանի հետ են աշխատել նաև Նիկոլայ Իվանովիչ Կաղրեկը (ավագ ուսուցիչ), Իսահակ Տեր-Իսահակյանը, ազգությամբ մոլդավացի՝ Սակկարան, Ֆունտիկովը, Կոկիևը, Տվարոգովը։

Շուլավերում մինչև պետական դպրոցի հիմնադրվելը բնակվելիս են եղել 800-ից ավելի տնտեսություն՝ հայեր, ռուսներ, վրացիներ, հույներ, պարսիկներ, հրեաներ և ադրբեջանցիներ։ Տեղի բնակիչների մեծ մասը զբաղվել է այգեգործությամբ, իսկ վերաբնակիչները զբաղվել են, պարսիկները՝ թեյավաճառությամբ, հրեաները՝ մեծ ու մանր առևտրով, ռուսներն ու վրացիները հիմնականում զբաղեցրել էին դավառային պատասխանատու պաշտոնները։

Չնայած Շուլավերը հանդիսացել է դավառային նշանավոր կենտրոններից մեկը, այնուամենայնիվ մանուկների դաստիարակության հարցը հուզել է ժամանակի առաջադեմ մտավորականությանը։

Մինչև պետական դպրոցի հիմնադրումը Շուլավերում գոյություն է ունեցել հայկական ծխական եկեղեցական երկսեռ դպրոց, մոտ 100 աշակերտով։

Ահա թե ինչ է գրում Միրաքյանի առաջին ուսուցիչ՝ Ասատուր Նալբանդյանի որդի, կենսաթոշակառու Գրիգոր Նալբանդյանը. «1915—1917 թթ. ես եղել եմ Միրաքյանի աշակերտը... Նա ասում էր, որ ուսումն այն զենքն է, առանց որի չի կարելի մարդավայել ապրել։ Զբաղվեցեք ընթերցանությամբ, որն ազնվացնում և բարձրացնում է մարդուն։ Բացի այդ, նա համոզում էր մեզ, որ սիրենք աշխատանքը, որովհետև աշխատանքը մարդուն դարձնում է ստեղծագործ։ Նա միշտ ընդգծում էր, որ աշխատասեր, ստեղծագործող մարդը կ՝աղթահարի կյանքի դժվարությունները»[46]։

Մեծարելով իր ուսուցչին, Նալբանդյանը շարունակում է. «1917 թ. աշակերտներիս տանում էր որբ աշակերտների այգիները մշակելու, ինքն էլ մեզ հետ միասին աշխատում էր, օգնում անօգնական որբերին։ Միրաքյանը լավ գիտեր հողագործություն, այգեգործություն, մեղվաբուծություն։ Դպրոցին կից

46 Տե՛ս Գ. Ս. Նալբանդյանի նամակը՝ հասցեագրված տողերիս հեղինակին։

այգում զբաղվում էր այգեգործությամբ։ Ես նրանից սովորել եմ ծառեր պատվաստել»։

Պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Շլեպչյանը անձնական զրույցի ժամանակ հետևյալը պատմեց. «Ես սկզբնական կրթությունս ստացել եմ Շուլավերում, Կոնո վարժապետի դպրոցում։ Ուսուցումը մեր դպրոցում նման չէր մյուս դպրոցներին, տարբերվում էր իր ձևով, բովանդակությամբ։ Միրաքյանը անչափ պահանջկոտ, հետևողական էր աշակերտների նկատմամբ։

Միրաքյանն առաջին անգամ անձամբ խոհարարների մոտ սովորեց խոհարարություն և սովորեցրեց աշակերտներին։ Որպես մանկավարժ հարգված, սիրված էր աշակերտության և գյուղի բնակիչների կողմից»։

Նման փաստերը բազմաթիվ են։ Միրաքյանի սաների մի մեծ բանակ կյանք է մտել, որոնք հետագայում դարձել են հմուտ մանկավարժներ, գյուղատնտեսներ և այլ մասնագիտությամբ աշքի ընկնող աշխատողներ։ Դրանցից են՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մեհրաբյանը, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կ. Վարդանյանը, գիտությունների թեկնածուներ Վ. Սաղաթելյանը, Ս. Շլեպչյանը, Ս. Մելիք-Սարգսյանը, վաստակավոր մանկավարժներ Հայկ և Սիրուշ Հակոբյանները, Գ. Նալբանդյանը, Պ. Գասպարյանը, Ա. Ղազարյանը և ուրիշներ։

Հետաքրքրական է 1890 թ. «Նոր-դարում» տպագրված առաջնորդող հոդվածը, որտեղ որոշակի նշված է. «Դպրոցը առանց ուսուցչի գոյություն ունենալ չի կարող։ Մեզ հարկավոր են պահանջի համեմատ ուսուցիչներ և ուսուցչուհիներ։ Վերջինիս կատարյալ սով է։ Մի քանի տարիներից հետո մենք շատ քիչ ուսուցիչներ կունենանք»[47]։

Ամբողջ ռուսահայ գավառներում 1889 թ. աշխատելիս են եղել 532 մանկավարժ[48]։ Մեկ տարի անց մանկավարժական աշխատանքի են անցել ևս 24 ուսուցիչներ, որոնցից 10-ը՝ քահանա։

Դպրոցներ կառուցելու և դրանք մանկավարժական կադրերով ապահովելու հարցերը միշտ էլ հուզել են ժամանակի առաջադեմ մտավորականությանը։ Այդ կարևոր հարցը չի վրիպել նաև Միրաքյանի ուշադրությունից։ Նա սրտի կսկիծով նկատել է, որ հայ ուսուցիչը անօգնական է ու աղքատ, նա հնարավորություն չունի բարձրացնել ու կատարելագործել մանկավարժական աշխատանքի որակը։

«Դժբախտաբար,—գրում է Միրաքյանը,—չնչին և անկանոն ոռճիկ ստացող մեր հայ ուսուցչին՝ ընտանիքի հորը ընտանեկան հոգսերի ճնշումը շատ քիչ ժամանակ է տալիս նրան դասերին պատրաստվելու համար»[49]։

Վերջիվերջո Միրաքյանը հանգում է այն մտքին, որ մանկավարժների նյութական վատ պայմանները, ցածր վարձատրությունը, ուսուցիչների սուր կարիք են ստեղծել հայկական դպրոցներում, որոնք իրենց կյանքն են նվիրում աշխարհում ամենադժվար ու պատվավոր գործին։ Նա տեսնում էր, որ խոշոր գումարներ են ներդրվում անպետք շինությունների, աննպատակ խնջույքների, թափառական հանճարների ու երգչուհիների վրա։ Մինչդեռ ազ-

47 «Նոր-դար», 3 հոկտեմբերի, 1890, էջ 1։
48 «Նոր-դար», 1890, № 53, էջ 2։
49 «Նոր-դար», 1890, № 131, էջ 2։

գի և մարդկության ճշմարիտ բարեկամները միայն կարիքի ու սովի են մատնված։

Միրաքյանը համոզմունք է հայտնում, որ այս գարը հույս է տալիս, որ շուտով հասարակությունը կհասկանա, կատարելապես կգնահատի դպրոցի դերն ու նշանակությունը և բոլորը կձգտեն ուսումի։ Միրաքյանը գտնում է, որ դպրոցի նշանաբանը «Ազատ զարգացումը, մտավոր ուժերի անարգել և ինքնուրույն լայնացումն է... Այդ կետում են հանդիպում իրար դպրոցը և հասարակությունը ու ընթանում մի ճանապարհով, ձեռք-ձեռքի տված, սիրով և համաձայն, այդ հողն է, որ ժողովրդի դեպի դպրոցն ունեցած համակրությունն իր առաջին արմատներն է ձգում»[50]։

Միրաքյանը որպես հայրենասեր, մատաղ սերնդին նվիրված առաջադեմ մտածողներից մեկը, դպրոցի անհրաժեշտության հարցը նմանեցնում է մի սքանչելի, բազում արմատներով լի ծառի և գրում է. «Ամեն մի ազգասեր ցանկանում է սրտի խորքից, որ արմատները ամրանան այդ հողի մեջ, որ բույսը հաստատվի, ապահովվի, որ բողբոջները ձգտեն դեպի լույս, միշտ բարձր և բարձր, որպեսզի նրանք կազմեն մի սքանչելի ծառ, որի հով ստվերը, տարբեր և զվարճարար պտուղները գալող սերնդի ուրախությունն ու բախտավորությունը կազմեն»[51]։

Եվ իրոք, այդ ժամանակ Միրաքյանին մտատանջել են ապագայի հայ մտավորականություն ստեղծելու հոգսերը։

Միրաքյանը հեռու լինելով արդյունաբերական կենտրոններից, չտեսնելով ու չհասկանալով դարի սոցիալական ու քաղաքական մեծ հեղաբեկումները, չի կարողացել հարցի ճիշտ լուծումը տալ։ Ահա թե ինչու նա հույսը դրել էր առանձին անհատների բարեգործության վրա՝ «Ե՞րբ, արդյոք, երևան կգա այն մեծ մարդը, որը կսրբե, կբացե մեր աչքերը և մեր հայացքը կդարձնե մերկ ճշմարտության վրա»[52]։

Հետաքրքրական է նշել, որ Միրաքյանի այդ ժամանակաշրջանում տպագրված բանաստեղծություններում ևս արտահայտվում են մանկավարժական նույն հայացքները։

1898 թ. տպագրված «Մեր դարը» բանաստեղծության մեջ Միրաքյանը քննադատում է իր ժամանակաշրջանը. նա ընդգծում է, որ ավերման բուունցք է տիրում ամենուր, չկա զգացմունք անարատություն, եղբայրություն, ազատություն։ Դաժան է գարը, սև ստվերի տակ կորչում են տաղանդները, զրկվում մտածողությունից, զգացմունքներից։ Գիշատիչները հոշոտում են ստեղծագործ մարդկանց, թողնելով նրանց սառցե կամարի տակ, իսկ քծնվողները, մատնիչները ու կաշառակերները դարի «փայլուն աստղերն են»։

Եվ պար ու քեֆեր, ամոթ, նախատինք
Ջնջում են իսպառ կյանքի վեհ ուղին,
Իդեալի դրոշ և արդար քրտինք
Մեր դարն անողոք հանձնում են հողին...[53]

---

50 «Նոր-դար», 1890, № 53, էջ 3։
51 Նույն տեղում, էջ 2։
52 «Նոր-դար», 1890, № 54, էջ 3։
53 «Տարազ», 1898, № 19, էջ 398, 399։

Իսկ հետագա մի շարք ստեղծագործություններում, լուսավոր ապագա ստեղծելու համար, պայքարի է կոչում հայ մտավորականությանն ու ռամիկին և համոզմունք հայտնում, որ եթե այդ պայքարի կայծը բռնկվեց մեկ անգամ, այլևս տիրող կարգերը անզոր կգտնվեն այն մարելու[54]։

Ըստ Միրաքյանի, հայրենասեր մանկավարժը պարտավոր է աշակերտի մտքերը զարգացնել, որով և կարելի է սովորեցնել՝ սովորելով և սովորել՝ սովորեցնելով[55]։

Միրաքյանը գտնում է, որ ուսուցիչը ավելի շատ ուշադրություն պետք է դարձնի թույլ աշակերտի վրա և ամեն՝ կերպ ներշնչի նրան աշխուժություն, ինքնավստահություն, որպեսզի նա մյուս աշակերտներին հավասարվելու հույսից չզրկվի, անտարբերության և անգործության չմատնվի։ Հաճախ աշակերտներին պետք է դիմել այնպիսի հարցերով, որպեսզի նրանք կարողանան պատասխանել, հարկ եղած դեպքում օգնել. այն ժամանակ արդյունքն աստիճանաբար ի հայտ կգա։

Միրաքյանը գտնում է, որ պատանուն հարկավոր է հասկանալ և գնահատել։ Այդ կապակցությամբ հատկանշական է նրա հետևյալ միտքը. «Չկա մի այնպիսի փչացած մարդ, առավել ևս պատանի, որի մեջ չլիներ գեթ մի լավ հատկություն։ Այդ պատճառով այն աշակերտների մեջ, որոնց հարկադրված եք մի որևէ պատճառով նախատել, աշխատեցեք միշտ որոնել մի որևէ լավ հատկություն և խոստովանեցեք նրանց այդ հատկությունները»[56]։

Միրաքյանը ելնելով իր մանկավարժական փորձից, գտնում է, որ եթե ուսուցչի մոտ նկատվում է նենգություն, ինքնավստահություն, ոչ օբյեկտիվ մոտեցում, աշակերտի հոգեբանության ոչ ճիշտ ըմբռնում, որքան էլ որպես մասնագետ, լավ բացատրի առարկան ու կատարի լոկ իր մանկավարժական պարտքը, ապա այդպիսին իբրև դաստիարակ իր օրինակով արժանի չէ մատաղ սերնդի դաստիարակ կոչվելու, որովհետև այդպիսիները մոռանում են կատարել մարդկային պարտքը։

Ըստ Միրաքյանի, ուսուցիչը պետք է բազմակողմանի զարգացած լինի, ունենա խոր գիտելիքներ, տիրապետի առարկային, դասավանդման մեթոդին ու վարպետությանը։ Աշակերտի նկատմամբ պետք է լինի հոգատար և զուսպ։ Միայն այս պայմաններում ուսուցչի դերը, հեղինակությունը բարձր կլինի և աշակերտները նրան կսիրեն, կհարգեն ու կխորհրդակցեն նրա հետ որպես մարդու, դաստիարակի։ Նման պայմաններում ուսուցիչը իր աշակերտներից կարող է պատրաստել հասարակության համար պիտանի մարդ։ Այդ խնդրի լուծման շրջանակները անսահման ընդարձակ, բարդ ու դժվարին ճանապարհով են ձեռք բերվում։

Խոսելով ուսուցչի առանձնահատկությունների մասին Միրաքյանը գրել է. «Հարգանքը դեպի ուսուցիչը կախված է նրա բարոյական-հոգեկան հատկանիշներից։ Նա հենց առաջին օրից, դասի ժամանակ գործի է դնում այն կարգը, որին ուզում է սովորեցնել կամ ընտելացնել աշակերտին։ Ամենաչնչին թուլությունն էլ մեծ դժվարությամբ է ուղղվում»[57]։

---

54 «Տարազ», 1898, № 31։

55 «Նոր-դար», 1890, № 54, էջ 4։

56 «Աղբյուր», 1896, № 7, էջ 283։

57 Նույն տեղում։

Անդրադառնալով դպրոցական կարգապահության հարցերին, Միրաքյանը գտնում է, որ հասակը, վայելչակազմությունը, ուսուցչի պատկառելի դեմքը ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ։ Հիմնական նախապայմանը՝ հմտությամբ սկսելու և տանելու մեջ է։ Ամենագլխավոր օրենքը, որ ուսուցիչը պիտի ունենա, իբրև ձեռնարկ արդարության, անկաշառելի արդարությունը դեպի ամենքը և ամեն մեկը, առանց խտրության։ Դպրոցում ուսուցչի աչքի առաջ պիտի միայն աշակերտների ջանասիրությունը և բարոյականությունը նշանակություն ունենա, ոչ թե ծնողների կարողությունը, ինչպես երբեմն պատահում է»[58]։

Միրաքյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել և իր գնահատականն է տվել ուսուցչի դասավանդման մեթոդի, աշխատասիրության, գիտելիքներ տալու անշահախնդրության և այլ հարցերի վրա։ Այդ առումով նա 1890 թ. գրել է. «Ինչքան լավ կընթանա ուսման դասընթացը, ինչքան մեծ հաջողություն և օգուտ կարելի է ստանալ, եթե ամեն մի ուսուցիչ էլ այնպես պատրաստվեր իր դասերին, որ դասատան մեջ տպագիր ձեռնարկի կարիք չըղգացվեր։

Այդպիսի պայմաններում աշակերտները չեն հեռանում ուսուցչի աչքից, դասն ընթանում է ավելի հաջող։ Օգուտը, որը ուսուցիչն աշխատում է տալ կամ վերագրել իր առարկային, ավանդման ժամանակ պետք է հավասար լինի այն հետաքրքրությանը, որն ուզում է նա արթնացնել երեխայի մեջ և որն անհրաժեշտ է ցանկացած նպատակին հասնելու համար»[59]։

Վահան Միրաքյանը ոչ միայն գիտակցել է մանկավարժի կոչման մեծությունը, այլև նրա հասարակական նշանակությունը նոր սերնդի դաստիարակման գործում։ Ինչպես սեփական փորձով, այնպես էլ ժամանակի մանկավարժների հոգեբանության խոր ուսումնասիրությամբ նա արել է շատ հետաքրքիր հետևություններ ու մտահանգումներ։ Բազմավաստակ մանկավարժը չէր կարող անտեսել աշակերտի հոգեբանությունը, որի վրա էլ խարսխված է մանկավարժի ամբողջ գործունեությունը։

Ո՞վ է ուսուցիչը, ո՞վ է աշակերտը, ինչպե՞ս դասավանդել, ի՞նչն է ուսուցչի հիմնական նպատակը, ի՞նչ է դպրոցը, ի՞նչ են քննությունները և այլ բազմաթիվ հարցեր, որոնք Միրաքյանի գրչի տակ գտել են ճիշտ լուծում ու մեկնաբանություններ, մինչև օրս էլ պահպանել են իրենց այժմեականությունը։

Միրաքյանը հանգամանորեն, մեկ առ մեկ ոչ միայն բացատրում ու տալիս է այդ հարցերի պատասխանները, այլև իր եզրակացություններում ու դրույթներում շատ որոշակի ցույց է տալիս մանկավարժի դերը, տեղն ու դիրքը։

Ըստ Միրաքյանի, մանկավարժը ոչ թե լոկ սովորեցնող է, լավ վարժապետ, այլ ստեղծագործող, պրպտող, ուսման նոր ձևեր որոնող ու գտնող, բարձր գիտելիքներով օժտված մի անձ, որը կոչված է մանուկների միտքը պայծառացնելու, կանգնեցնելու ամուր հիմքերի վրա, և ամենակարևորը, որքան հնարավոր է դյուրամարսելի մեթոդներով ու ձևերով հասցնելու նրանց իր ասելիքը։ Այս առումով շատ ուշագրավ ու հետաքրքիր է «Նոր-դարում» նրա

58 «Աղբյուր», 1896, № 7, էջ 283։
59 «Նոր-դար», 1890, № 53, էջ 3։

հոդվածը, որտեղ Միրաքյանը հանգամանորեն խոսում է դասավանդման մեթոդի մասին։

«Մենք արդեն վաղուց գիտենք, գիտենք փորձերով, որ մանկական հասակին հարմար փոքրիկ պատմությունները շատ են զբաղեցնում երեխաներին։ Այդ դեպքում ավելի լավ կլիներ, եթե ուսուցիչը, հարմարվելով հանդամանքների հետ, ինքը հորիներ երեխաների համար պատմություններ, կամ օգտվելով ուրիշի պատմություններից, ազատ արծարծեր նրանց բերանացի։ Իմ կարծիքով այդ պետք է այսպես սկսել.

1. Պատմել առանձին մտքերով։

2. Մեկ-երկու մտքից հետո հարցնել պատմածի մասին։

3. Պատմածների մասին աշակերտներին հայտնել տալ իրենց կարծիքները։

4. Եթե հարկը պահանջում է՝ պատմել տալ պատմածը։

5. Աշակերտներից մեկին պատմել տալ բարձրաձայն ազատ կերպով ամբողջ պատմությունը, իսկ մյուսներին ուղղել տալ նրա բաց թողած տեղերը։

6. Թվել պատմության մեջ գլխավոր բարոյական կետերը, որպեսզի պատմությունն իր նպատակին ծառայած լինի, նա երկար չպետք է լինի»[60].

Վերցնենք մի այլ հատված։

«Շատ ուղիղ են նկատել, թե կարդալ՝ կնշանակե հասկանալ, որովհետև վանկերի, խոսքերի և ոճերի մեքենայաբար կազմելն առանց կարդացածի իմաստին խելքով թափանցելուն, հազիվ թե կարելի լինի ընթերցանություն անվանել...

Եթե մենք պահանջենք երեխայից, որ նա մի որևէ բան անգիր ասի և նա դժվարանալով, չի կարողանում արտասանել պատշաճ կարգով նրա մտքերը և հանգերը, այն ժամանակ նա աշխատում է այնքան բովանդակությունը չհիշել, որքան որ խոսքերի ձևերը, որով արծարծված է եղել միտքը...

Այդ պատճառով անգիր անելու կտորները շատ-շատ չպետք է տալ, այլ պետք է պահանջել, որ տվածը լիովին հասկացված լինի, որպեսզի նա, խոր ընկնելով նրանց հիշողության մեջ՝ անկորուստ մնա»[61]։

Ահա այսպես մեկ առ մեկ՝ քննելով դասավանդման մեթոդի կիրառման միջոցները, Միրաքյանը ձգտում է պարզաբանել ու հիմնավորել մանուկների ճիշտ դաստիարակման կարևոր պրոբլեմը։ Հետաքրքիր են և Միրաքյանի դատողությունները քննությունների վերաբերյալ։ Նա գտնում է, որ քննությունները չպետք է կրեն ձևական բնույթ, որն ինքնըստինքյան հանգեցնում է ոչ թե իսկական գիտելիքներ ձեռք բերելուն, այլև անգիր անելուն, որը շատ շուտ անցնում է մոռացության գիրկը։

«Այնտեղ, որտեղ քննությունները կատարվում են միայն ձևի համար, կարելի է երաշխավոր լինել, որ բոլորն էլ անգիր արած կլինեին, ինչքան որ այդ կարելի կլինի։ Բոլորն էլ կատարվում է իմաստուն եղանակով. գնդերը կանգնած են կարգով, բոլորը շարվում են, ինչպես մի լարի վրա, դյուրալի է նայել, թե ինչպես ամենքը և ամեն ինչ փայլում է...»[62]։

Առաջին հայացքից ուսուցչին թվացող որոշ հատկանիշներ Վ. Միրաքյանի մոտ իմաստավորվում են և մյուս բոլոր կարևոր հատկանիշների հետ ամբողջանում։

60 «Նոր-դար», 1890, № 53, էջ 2։

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում, էջ 3։

Միրաքյանի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրող Լևոն Բատիկյանը 1963 թ. «Սովետական մանկավարժ» ամսագրում խոսելով Միրաքյանի մանկավարժական հայացքների մասին և հիմք ընդունելով միայն ՀՍՍՀ ԳԱ գրականության թանգարանի Միրաքյանի ֆոնդի չհրատարակված գործերը, ընդգծել է, որ Շուլավերի դպրոցում ծեծ չի կիրառվել[63]։ Մինչդեռ Միրաքյանը պրակտիկ կյանքում կիրառել է ծեծը և մամուլում հանդես եկել մարմնական պատիժների անհրաժեշտության մասին։ Նա այլ կերպ էլ չէր կարող վարվել, քանի որ դպրոցական սահմանադրության 91—103 հոդվածներով պատժի միջոցները ընդունված կարգ էին։ Այս հարցում Միրաքյանը որպես մանկավարժ-դաստիարակ վերափոխվեց խորհրդային կարգեր հաստատվելուց հետո։

Միրաքյանը իր սաների մեջ միշտ տեսել է լավը, գեղեցիկը, նոր հասարակարգ կառուցող ապագա սերնդին։

Որպես հայ անվանի մանկավարժներից մեկը՝ Միրաքյանն իր արժանի ավանդն է ներդրել հայ դպրոցի զարգացման գործում և իր հաստատուն տեղը պիտի ունենա հայ մանկավարժության պատմության մեջ։

С. С. ЧОБАНЯН

## СТРАНИЦЫ ИЗ ЖИЗНИ ВАГАНА МИРАКЯНА

### Резюме

Автор поэмы «Охота на Лалваре» Ваган Миракян относится к числу виднейших представителей армянской литературы. Наряду с общеизвестной поэмой вышел в свет сборник его стихотворений «Без струн», а также многочисленные стихотворения, опубликованные до 1901 года.

Автор данной статьи представил в издательство «Армения» большинство найденных им стихотворений, готовящихся к изданию в связи со 100-летием со дня рождения поэта.

Литературоведы, критики и общественные деятели давали различную оценку поэме, допускались неточности, искажающие биографию поэта.

В статье устраняются ошибочные мнения, существовавшие до последнего времени. На основании подлинных документов подробно исследуются вопросы, связанные с биографией поэта.

Впервые освещается педагогическая деятельность Андрея-Коно (Вагана) Миракяна на основании статей, опубликованных в 1890—1896 гг., а также его 40-летняя трудовая деятельность.

Подробно излагается мировоззрение автора поэмы, дана оценка его выступлений о роли и значении школ, методики преподавания и другие вопросы, имевшие актуальное значение.

---

63 «Սովետական մանկավարժ», 1963, № 1, էջ 76։